ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 446

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքը (Պարտիզակ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Թալին համայնքի (Պարտիզակ բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ *ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքը (Պարտիզակ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արագածոտն-9 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը*՝

ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի (Պարտիզակ բնակավայրը) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
02-089-0120-0018 կադաստրային ծածկագրով 16.0042 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր	02-089-0120-0018 կադաստրային ծածկագրով 16.0042 հա մակերեսով էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ էներգետիկայի հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացված պահանջը (կցվում է):

4. ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Պարտիզակ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Պարտիզակ բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե. Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ. Դավթյան

Երևան, «21» «նոյեմբերի» 2024թ.